

355.5

F-11

Բ. Գ. Կ. Բ.

**ՁԵՌՆԱՄԱՐՏԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿ**

—•••—
**ՅԵՐԵՎԱՆ
1980**

1 MAR 201

01.03.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱԼ ՓՈՒԼՏԻ

ՀԱՅՍՏ

355.5

բ-11

պ

Բ. Գ. Կ. Բ.

ՁԵՌՆԱՄԱՐՏԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՎԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿ

0401



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱԼ ՓՈՒԼՏԻ
ՍԵՐԻԱԿԱՆ ՀՅԱՄԱՆԻՔԱՆՈՒՄ

1980



Անվան

12519-57

Ն Ա Խ Ա Ր Ա Ն

Սույն ժամանակավոր ձեռնարկով սվինամարտը նկատի յե առնվում իբրև ձեռնամարտի մի բաղկացուցիչ մասը, վորտեղ բացի սվինով և հրացանի կոթով գործելուց, գործ են ածվում հարձակվելու և պաշտպանվելու նաև մի շարք այլ միջոցներ և նվագներ (պրիումներ) — հրաձգութուն կիպ մոտից, նռնակներով, ձեռքի տակ ունեցած գեներով, վոտֆով հարվածել և այլն:

Մինչև ֆիզպատրաստութեան հրահանգի լույս տեսնելը՝ սույն ժամանակավոր ձեռնարկը հանդիսանալու յե իբրև պաշտոնական ձեռնարկ թգկբ գորամասերում և ԲՈՒՀ-երում սվինամարտի ուսուցման համար:

I. Ն Ե Ր Ա Մ ՈՒ Թ Ց ՈՒ Ն

§ 1. «Հարձակողական մարտում հետեւեալի ունեցած վերջնական մարտական խնդիրն է՝ հաւառակորդին ձեռնամարտով ջախջախել. իսկ պաշտպանողական մարտում՝ պահպանելով դրաված տեղանքը, հակահաւառակորդին կրակով քայքայել և հակա-դրոհով վռնէացնել»: (Հ. Մ. Կ. § 23):

«Հաղթահարելով հակահաւառակորդի առաջադրած բոլոր խոչընդոտները, իր կրծքով նրան դեմ ու դեմ դուրս գալ, վճռական ձեռնամարտով վերջնականապես կտարել նրա դիմադրութիւնը և վռնէացնել նրա կենդանի ուժը» (Հ. Մ. Կ. § 3, կէս «ա»):

Գրահի հաջողութեան համար պահանջվում է մարտիկներէջ տնդրդվելի վճռականութիւն և չնայած բոլոր խոչընդոտներին, ինչ ել վոր լինի, կովել մինչև ձեռնամարտը և վռնէացնել հակահաւառակորդին» (նույնը, § 75):

Մարտիկի ընդհանուր պատրաստութեան մեջ ձեռնամարտի ունեցած նշանակութիւնն ու տեղը քաղականապի վորոշ և Հետեւեալի Մարտական Կանոնադրքի II մասից վերելում բերված քաղվածքներով:

§ 2. Ձեռնամարտի հաջողության համար մարտիկը պետք է՝

1. Կարողանա ամեն բոլոր կանաղան դրուծյունից հրացանով խոցել և հարվածել, պաշտպանվել և անմիջապես գործով պատասխանել.

2. Կարողանա կռվի համար ուղտադործել ձեռքի տակ ունեցած միջոցները՝ բահը, կացինը, քլուռնդը, դանակը, փայտը, քարը.

3. Կարողանա հակառակորդին զինաթափել, յեթե հնարավոր չե նախորոք հարվածել նրան.

4. Կարողանա պարզ պատկերացնել թե՛ յերբ, յորտեղ, ինչպիսի պայմաններում մարտավարական տեսակետից նպատակահարմար է այս կամ այն զենքն ու նվազը (սլոխոմը) դործադրել.

5. Լավ պատրաստ լինել՝ խորտակելու բնական և արհեստական խոչընդոտները.

6. Կարողանա մարտում իր ունեցած շարժումը զուգակցել կրակային միջոցների ուղտադործման հետ—զնդակներ, նռնակներ (վերջում «սլի-նամարտի» անցնելիս պետք է հրացանը լցրած ունենալ թեկուզ 1—2 փամփուշտով) :

§ 3. Ձեռնամարտի նվազներին սովորեցնելը և մարզելը պարտադիր ե գործառնների պետերի և շարային ամբողջ կազմի համար, վորոնք զինված են սվինավոր հրացաններով :

II. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԿՍՏԱՐՈՒՄԸ

§ 4. Ձեռնամարտը սովորեցնելը կազմակերպում է աժադ և միջին պետերի կազմը՝ յուրաքանչյուրն իր գործառնում կամ ստորաբաժանման մեջ :

Պարապմունքների անմիջական կատարման պարտականությունը կարող է դրվել լավ պատրաստված կրտսեր հրամատարի վրա, սակայն դասակի, վաչտի հրամատարը անպայման հրահում և ղեկավարում են այդ պարապմունքները :

§ 5. Ուսուցման համար կազմակերպում են 12—15 հոգուց բաղկացած խմբակներ, վորոնցից յուրաքանչյուրը տրվում է մեկ հրահանգչի՝ իր ոգնականով (դասակը կես է արվում) :

§ 6. Յուրաքանչյուր պարապմունք պետք է նախապես աւարհովված լինի համապատասխան ինվենտարով՝ զենքով, խրովիլակով, մարդափայտերով (տես հավելված) :

§ 7. Տեխնիկայի ուսումնասիրության համար իբրեհ հիմք ե ծառայելու որինակելի ցուցադրումը, վորը ուղեկցվում է բացատրություններով :

§ 8. Ուսուցումն սկսվում է հիմնական նվազների տեխնիկայի ուսումնասիրությունից :

§ 9. Յուրաքանչյուր նվազի մարզանքն ակրավում է այն մոմենտից, հենց վոր բմբոնած են լինում շարժումների տեխնիկան:

§ 10. Ուսուցումն ու մարզանքը կատարվում են հաջորդաբար՝ ճիշտ շարժումներ կատարելու, դիպուկության, հարվածելու և խոցելու ուժի ու արագության վերաբերյալ և հաջորդաբար դանազան ուղղություններով մի քանի նշաններ հարվածելով:

§ 11. Զեռնամարտի տեխնիկայի կատարելագործումը ձեռք է բերվում նվազները կատարման մարզանքի միջոցով, ինչպես առանձին նվազների, այնպես էլ նրանց կոմպլեկսի: Մարզանքը կատարում են.

ա) Հատուկ դասերին (տես ուսուցման ծրագիրը), բ) մարտավարական պատրաստության ընթացքում, վորի համար գրոհի տեղերը սերբավորում են խրովիլակներով և գ) արտադպրոցական սպորտային աշխատանքում:

§ 12. Նվազների տեխնիկայի ուսումնասիրությունը կատարում են հիմնական դեմքով (վարժական հրացան, մարտական սվինով) բացառապես խրովիլակները վրա և անպայման յուրաքանչյուր մարտիկի հետ առանձին:

§ 13. Բոլոր նվազների ուսումնասիրությունն

ու մարզանքը կատարում են քայլելով և վազելով, սկսած նշանից՝ մարտիկին աստիճանաբար տանելով 10—20 մետր հեռավորության վրա:

§ 14. Վանումների և նրանց պատասխանելու մարզանքը կատարվում է հրահանգչի կամ վարժ ու փորձված մարտիկի ոգնությամբ, վորը սովորողի դեմ դործում է մարզափայտով:

§ 15. Հիմնական նվազները յուրաքանչյուր մարտիկ պետք է լավ յուրացնի, սակայն հետամնացները չպետք է ամբողջ խմբի՝ հաջորդ նվազների ուսումնասիրությունն անցնելու հետաձգման պատճառ դառնան: Հարկ չեղած դեպքում հետամնացներից կազմում են առանձին խմբակներ (պարապմունքներին) տալով վերջիններին լավագույն հրահանգչին:

§ 16. Նվազների ուսումնասիրությունը հանձնարարվում է կատարել սույն ձեռնարկում բացատրածի հաջորդականությամբ:

III. ԾՐԱԳԻՐ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՇԻՎ

§ 17. Զեռնամարտի համար ուսումնասիրություն և մարզանքի յենթակա յեն հրացանին տիրապետելու ստորե ըերված նվազները:

№ ռ բա ղարկի	Բովանդակություն	Ժամ.		Ծանոթություն
		ժամ.	հազիր	
1.	Ուղեկու, հարվածելու, վանելու և մարտիկի շարժվելու ուղղությունները վերահսկող նվաճիչներ տեխնիկայի ուսումնասիրությանը . . .	10		2-րդ կետի համար.— Կատարվում և դասը ջրադրի առաջարկությունը կատարելուց առաջ մարտիկներին հետ, հրահանգչին սննդանոցի դեկորացիայի կամ կենդանի կերպով ուսուցման ամբողջ ժամանակամիջոցում, պարտադրումը հին նվազի տեխնիկան յուրացնելուց հետո (հրահանգչին հետ) :
2.	Մարտիկի առանձին խոյուժներին և հարվածներին տեխնիկայի առնչական մարզանքը :			3-րդ կետի համար.— Տես մարտիկի սկզբնաժամանակի նվաճիչների տեխնիկայի վերաբերյալ նրանց շուրջակայությանը և նշանները հարվածելու ուղղության փոփոխմանը . . .
3.	Մարտիկի անհատական մարտիկի սկզբնաժամանակի նվաճիչների տեխնիկայի վերաբերյալ նրանց շուրջակայությանը և նշանները հարվածելու ուղղության փոփոխմանը . . .	8		4-րդ կետի համար.— Տես V գլուխ, Բ. համաձայն ցուցումների :

4.	Մարտիկի սկզբնաժամանակի նվաճիչ	2		5-րդ և 6-րդ կետերի համար.—
5.	Մարտիկի անհատական մարտիկի նշանները հարվածելու, սկզբնաժամանակի հաղթանակների կողմնորոշումները	2		Տես V գլուխ, Գ. համաձայն ցուցումների :
	Նույն նախնի համար (պրոց.)	2		
Ընդամենը		24		

§ 19. Առանձին նվազմիլի ուսումնասիրութ յան
որինակելի հաշիվ (խմբակի համար)

10

Խմբակ	Բովանդակութ յուն	Քանակը		Ծանոթութ յուն
		ժամ	րոպե	
1.	Ծանոթութ յուն «Մարտի» դր- բութ յան հետ	—	20	Հաշիվ մեկ ցույց և տրված ժա- մանակի ախ դուստրը, վրդ հա- կարվում և տվյալ նվազի տրվող ժամանակաշրջանի համար :
2.	Ուսումնասիրութ յուն «Խո- ցի» հիմնական խոցման (ու- ղիւ և շարժումներով)	1	30	Ուսումնասիրութ յան ժամանակ յուրաքանչյուր պարապմունքի մեկ պետք և մայնել յերկու նվա- ղից վրդ ավելի : Նախորդ պա- րապմունքների անցած նվազները
3.	Ուսումնասիրութ յուն կործ- խոցման	—	30	պետք և շարունակ կրկնվեն և ախ նվազները յուրացնողներն ու- ղարկում են մարդկու, հրա- հանգչի տնայանի դեկավարու- թ յամբ կամ լիչնուրույն կերպով :
4.	Ուսումնասիրութ յուն յերկար խոցման առանց բնկոյի (B.H- II B.II)	—	20	
5.	Ուսումնասիրութ յուն յերկար խոցման, բնկոցով	1	—	
6.	Ուսումնասիրութ յուն յետ- խոցման, իրաժամանակ հրա- ցանի կրթով վանելով և աջ փառքի վրա գտնուով	—	50	

7.	Ուսումնասիրութ յուն ցած խոցելու (պակած հալաւա- կորդ)	—	20	
8.	Ուսումնասիրութ յուն յետ- խոցման, վանելով ձօնի և յերկու վտարքի վրա գտ- նուով	—	30	
9.	Ուսումնասիրութ յուն վանե- լու և կոյքեց կարծ հորվա- ծելու	1	30	
10.	Ուսումնասիրութ յուն վանե- լու և կոյքեց յերկար հոր- վածելու	—	30	
11.	Ուսումնասիրութ յուն վանե- լու և ցածից հարվածելու	1	—	
12.	Ուսումնասիրութ յուն ճարից առաջ հարվածելու, բուլկիս նախապես վանելով	1	20	
13.	Ուսումնասիրութ յուն յետ և առաջ հարվածելու	—	20	
Ընդամենը		10	—	

11

IV. ՍՎԻՏԱՄԱՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՎԱԳՆԵՐԸ

Նպատակը. 1) Սովորեցնել սվինով ճիշտ, գի-
պուկ և ուժեղ խոցումներ ու հրացանի կոթով
հարվածներ հասցնելու խրովիլակներին:

2) Սովորեցնել խոցումների և հարվածների
արագ, շեշտակի և ուժեղ վանումներ կատարել:

3) Սովորեցնել հրացանով ազատ և հարթիկ
չարժումներ կատարել:

Ա. «Մարտի» դրությունը և այդ դրու-
թյամբ շարժվելը

§ 20. «Մարտի» դրությունը հիմնական և ա-
մենահարմար դրությունն է խոցելու, հարվածե-
լու և վանելու պատրաստ լինելու համար: Այդ
մոմենտը վերցված է մարտիկի շարժվելու (քայ-
լելու և վազելու) դրությունից:

Հրաման՝ «Մարտի»:

Կատարումը. — «Զգաստ» կեցվածքից (համա-
ձայն Հետեվակի Մարտական Կանոնադրքի) աջ
ձեռքի շարժումով պետք է հրացանը չարտել սվի-
նով առաջ՝ ուղղելով վերջինիս ծայրը ամենակարճ
ուղղությամբ հակառակորդի կոկորդի բարձրու-
թյան: Բռնելով հրացանը ձախ ձեռքով փոքր ինչ
կողքից և ցածի շարժական ողի վերեվից, իսկ ա-

ջով՝ հրացանի կոթի ճտից, միաժամանակ ծալե-
լով յերկու վոտքը ծնկներից, ձախ վոտքը պետք



Պատ. 1.

է քցել մի քայլ առաջ և մի փոքր ձախ, մարմինը




Պատ. 2.

գոտկատեղից կուցնել և մի քիչ առաջ տալ:
(Պատ. 1 և 2):

Հրացանի դրուքյունը. — Սվինի ծայրը պետք է ուղղված լինի հակառակորդի կոկորդին, հրացանի կոթի ճիտը պետք է ընկնի դոտու մոտ՝ աջ փամփշտամանի տաջնվից :

Ձեռքերի դրուքյունը. — Ձախ ձեռքը պետք է լինի ցածի շարժական ողակից բարձր, մի քիչ ծալված՝ արմունկից, արմունկը դարձրած դեպի մարմինը : Աջ ձեռքը պետք է բռնի հրացանի կոթի ճիտը, աջ ձեռքի նախաբաղուն իր ներսի կողմով պետք է սեղմվի հրացանի կոթին (պատ. 3) :

Վուտքերի դրուքյունը. — Վուտքերը պետք է լինեն քայլի դրությամբ սկսելով ձախ վուտքից և մի վոտքի ծալված :



Պատ. 3.

Ծանոթություն. — Ձախիկները համար «Մարտի» դրությունը թույլատրելի չէ աջ վուտքի դրությունից, հրացանը պահելով ձախ կողքի վրա


և աջ ձեռքով բռնելով ցածի շարժական ողի վերեվից, իսկ ձախով՝ հրացանի կոթի ճիտից :

§ 21. Տեղաշարժումներ. — Գրոհի ժամանակ տեղի ունեցող հիմնական շարժումներն են՝ քոյլիլը, վաղիլը և թռչելը : Տեղաշարժումների ժամանակ զենքը պետք է մնա «Մարտի» դրությամբ :

§ 22. Դրուքյունը. — «Զգաստ» և «Ալատ» : Պենտ և կատարել համաձայն Մարտական կանոնադրքի : մասի § 16-ի :

Բ. ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

§ 23. Խոցումը սվինադրոհի ժամանակ հան-




Պատ. 4.

դիսանում և հարձակման ամենակարեւոր նվազը : Նայած մինչև հակառակորդը յեղած տարածու-

թյանը (մինչև նշանը) և նրա զրույթյանը, կարող ե կատարվել՝

- 1) խոցում ընկոցով:
- 2) Կարճ խոցում (առանց ընկոցի):
- 3) Յերկար խոցում (առանց ընկոցի և ընկոցով):

Նայած նշանի զրույթյանը՝ ցույց տված բոլոր խոցումները կարող են կատարվել՝ առաջ, վերել, ցած, կողքերը և յետ:



Պատ. 5.

§ 24. խոցում ընկոցով. — Հանդիսանում է իբրև հիմնական նվազ խոցելու համար:

Հրացանը՝ «խոցիր»:

Կատարումը. — Վորճան կարելի չե պետք և արագ՝ կերպով սվինը յերկու ձեռքով հասցնել նշանին, այն աստիճանի, վոր ձախ թեվն ամբող-

ջովին բացվի, ՀՀարժեքով ձեռքը հրացանի վրայով և դրա հետ միասին անմիջապես մարմինն առաջ տալով՝ պարզել յետեվում գտնվող աջ (ձախ) վոտքը և բարձրացնելով ձախ (աջ) վոտքի նայրը,



Պատ. 6.


առաջ քցել վոտքը կրնկի վրա այնքան, վորքան անհրաժեշտ է հակառակորդին հարվածելու համար (պատ. 4 և 5):

Ծանոթություն. — Ընկոցի յերկարությունը միանդամայն անհատական բնույթ ունի և կախված է մարտիկի մարմնի կազմվածքից:

§ 25. Կարճ խոցում (առանց ընկոցի). — Կատարվում է այն դեպքում, յերբ մինչև հսկառու հորը յեղած հեռավորությունն անհրաժեշտ է սվինը յետ քաշել:

Հրաման՝ «Կարձ-խոցիր» :

Կատարումը. — Պետք է յերկու ձեռքով հրացանը թափով յետ քաշել դեպի իրեն, միաժամանակ ուղղելով ավինի ծայրը նշանին (ձախ թեփի նախաբաղուկը պետք է լինի մարմնին սեղմած, աջ թեփը արմուկից մի փոքր ծայած, հրացանի կոթը իջեցնելով ավինից ցած), վրից հետո ուժ-դին կերպով չալրտել հրացանն առաջ՝ մինչև ձախ թեփի լիակատար բացվելը, միաժամանակ մարմինը տալով առաջ (պատ. 6 և 6 ա.) :



Պատ. 6 ա.


Ծանոթություն. — Նայած հրացանի դրու-թյանը, այդ խոցումը կարելի չէ փոխարինել հրացանի կոթի հարվածով՝ կողքից կամ ցածից — վռաքերի արանքին :

§ 26. Յերկար խոցում. — Գործադրվում է

մարտիկից բարձր կամ ցածր (խրամատում, պատ-վարի վրա) դանդաղ հակառակորդի համար և յերբ համաձայն տեղանքի պայմաններին՝ չի կարելի նշանը սովորական ձևով խոցել ընկոցով (խոցում խրամատի կամ փոսի վրայից) : Նայած մինչև հակառակորդը (նշանը) յեղած հեռավորութանը՝ յերկար խոցումը պետք է կատարեն ընկոցով և առանց ընկոցի :

Յերկար խոցում առանց ընկոցի :


Հրաման՝ «Յերկար առանց ընկոցի-խոցիր» :



Պատ. 7.

Կատարումը. — Հրացանը յերկու ձեռքով պետք է չալրտել առաջ մինչև ձախ թեփի լիակատար պարզվելը և նրանից հետո առանց կանգ առնելու աջ ձեռքով հրացանը՝ պարզած ձախ ձեռքի ավի վրայով չալրտել նշանին, մինչև վր պահեա-

տատուիւր զա, նստի ճախ ձեռքի տակին: Մ'արմի-
նը մի փոքր տալ առաջ՝ ծոկելով նրան զոտկատե-
ղից (պատ. 7):



Պատ. 8.

Յերկար խոցում (ընկոցով):

Հրաման՝ «Յերկարով՝ խոցիր»:

Կատարումը.— Հրացանը պետք է մղել առաջ, ինչպես առանց ընկոցի յերկար խոցման ժամանակ և շարժումը վերջացնել ընկոցով, ինչպես ցույց է տրված § 24-ում (պատ. 8):

§ 27. Խոցում՝ ցած, պետք է գործադրել այն դեպքում, յերբ նշանն անմիջապես գտնվում է մարտիկի վոտքերի մոտ:

Հրաման՝ «Ցած՝ խոցիր»:

Կատարումը.— Կատարել կարճ խոցում՝ այն տարբերությամբ միայն, վոր հրացանը վրա բե-



Պատ. 9.

րելիս նրա սահաստատուիւր գտնա զեպի աջ, սը-



Պատ. 10.

վինի ծայրը՝ զեպի ցած, իսկ հրացանի կոթը նախաբաղուկի հետ վեր բարձրանա (պատ. 9):

§ 28. Խոցելուց հետո մարտիկը պետք է յերկու ձեռքով անմիջապես արագ և կտրուկ թափով սվինը դուրս քաշի դեպի իրեն և յեթե հարկավոր



Պատ. 11.

և, մարմինը թափ տալով և վոտքը թերախին հենելով (մարտիկը չարժումը չարունակում է) :



Պատ. 12.



Պատ. 13.

§ 29. Մարտիկը խոցում է՝ փոխելով իր

չարժման ուղղութիւնը, յերբ հակառակորդը յերեւում է կողքից կամ յետեւից :

Հրաման՝ «Աջ, ձախ, յետ-խոցիր» :

Կատարումը. — Պետք է կատարվի՝ նայած մինչև հակառակորդը յեղած հեռավորութիւնը,



Պատ. 14.

քայլելով կամ վազելով պտտվելով (համաձայն Մարտ. Կանոն. ցուցումներին) կամ դարձումներով (աջ կամ ձախ վոտքի վրա) :

ա) Դիպի աջ (ձախ) վորևև վոտքի վրա դառնալով խոցել ընկոցով (մյուս վոտքով) կամ խոցել կարճ՝ նայած մինչև նշանը յեղած հեռավորութիւնը. հակառակորդի մոտիկ յերեւալու դեպքում դարձում կատարել մյուս վոտքը յետ տալով և միաժամանակ վանելով :

բ) Յետ—ձախ վոտքի առջևիւմ գտնվելու դեպքում :

Ձախ ձեռքով հրացանը դեպի իրեն տանելով, միաժամանակ յերկու վոտքերով աջ թեվի վրա յետ դառնալ և խոցել առանց ընկոցի կամ ձախ վոտքի ընկոցով, նայած մինչև նշանը յեղած հեռավորությանը կամ թե հրացանը ձախ ձեռքով դեպի իրեն տանելով, միաժամանակ աջ վոտքը մի քայլ առաջ քցելով յերկու վոտքերի վրա դառնալ ձախ թեվի վրա դեպի յետ և խոցել առանց ընկոցի կամ ձախ վոտքի ընկոցով, նայած մինչև նշանը յեղած հեռավորությանը (պատ. 10 և 11) :

գ) Յետ աջ վոտքի առջևիւմ գտնվելու դեպքում :

Ձախ ձեռքով հրացանը դեպի իրեն տանելով միաժամանակ յերկու վոտքերով աջ թեվով դառնալ յետ և խոցել առանց ընկոցի կամ աջ (ձախ) վոտքի ընկոցով, նայած մինչև նշանը յեղած հեռավորությանը (պատ. 12 և 13) :

Գ. Վանումներ (отбивы)

§ 30 Վանում կոչվում է գենքի այն գործողությունը, վերով յետ են շարտում հակառակորդի խոցումը կամ հարվածը : Վանումը կատարում են հրացանի փողամասով կամ կոթով :

§ 31. Վանում ձախ. — Վանում են հրացանի ձախ կողմից դեպի մարմնի վերին մասն ուղղված հարվածը կամ խոցումը :

Հրաման՝ «Ձախ վանիր» :

Կատարումը. — Ձախ ձեռքով հրացանն արագ շարժելով առաջ—ձախ և հրացանը պահեստատուփի վրա փոքր ինչ շուռ տալով, աջ—վերև, փողամասով կարճ և կտրուկ հարված հասցնել հակառակորդի գենքին (պատ. 14) :



Պատ. 15

§ 32. Վանում աջ. — Վանում են հրացանի աջից դեպի մարմնի վերին մասն ուղղված հարվածը կամ խոցումը :

Հրաման՝ «Աջ վանիր» :


Կատարումը. — Ձախ ձեռքով հրացանն արագ

չարժեկով սոռճ-աջ, նրա փողամասով կարճ և կարուկ հարված հասցնել հակառակորդի դեմքին (պատ. 15):

§ 33. Վանում աջ-ցած.— Վանում են հրացանի աջ կողմից մարմնի ցածի մասն ուղղված խոցումը կամ հարվածը:

Հրաման՝ «Յած աջ վանիր»:

Կատարումը.— Ձախ ձեռքի արագ շարժու-



Պատ. 16.

մով հրացանի փողամասը կիսաշրջանով հասցնել ձախ-ցած-աջ և միաժամանակ հրացանի կոթը դուրս բերել աջ թևի նախարադուկի տակից (դեպի դուրս). արժուենին ազատ և (պատ. 16):


§ 34. Վանում ձախ-ցած.— Վանում են ձա-

խից մարմնի ցածի մասն ուղղված խոցումը կամ հարվածը:

Հրաման՝ «Յած՝ ձախ վանիր»:

Կատարումը.— Ձախ ձեռքով հրացանն արագ ցած շարժեկով և միաժամանակ հրացանը դարձնելով պահեստատուի վրա աջ՝ վանել հակառակորդի խոցումը ցած-ձախ: Հրացանի կոթը դուրսում և աջ ձեռքի նախարադուկի տակ (պատ. 17):

Յերբ հակառակորդը խոցում և մարտիկի ձախ կողմից, այդ խոցումը վանել «ցած-ձախ-վանիր» հրամանով:




Պատ. 17.

Կատարումը.— Ձախ ձեռքի արագ շարժումով հրացանի փողամասն ուղղել ցած-ձախ: Հա-

կառավարչի զենքին հարվածում են միաժամանակ
դառնալով ձախ:

§ 35. Ագուստի ցածի մասով աջից կամ յե-
տեվից անդի ունեցող խոցումը վանելը:

Հրաման՝ «Աջից-վանիր»:



Պատ. 18.

Կատարումը.— Կրոնկները վրա արագ դառ-
նալով՝ հրացանի պահեստատուին աջ դարձրած,
ձեռքերի և մարմնի կտրուկ շարժումով՝ ագուստի
ցածի մասով վանել հակառակորդի զենքը աջ
(պատ. 18):

Վանումից հետո պետք է կարճ խոցում կա-
տարել աջ (պատ. 19):

Դ. Հարվածների հրացանի կոթով

§ 36. Հրացանի կոթով հարվածներ են կա-
տարում՝

ա) Իբրև պատասխան հարվածների՝ հակառա-
կորդի դրոհը վանելուց հետո՝ քայլելիս կամ վա-
ղելիս.

ա) Իբրև պատասխան հարվածների՝ հակառա-
կորդի խոցումը վանելուց հետո.

դ) Այն զենքերում, յերբ հարվածը կարող է
ավելի արագ կատարվել, քան խոցումը.



Պատ. 19.

դ) Այն զենքերում, յերբ հակառակորդի մո-
տիկ լինելը զրկում է ավելիով դործելու հնարա-
վորությունից.

դ) Իբրեւ պատասխան հարված հակառակորդի կողմից զենքը բռնելուն, յերբ մարտիկի զենքը տարված ե ձախ:

Հարվածները կատարվում են կողքից, ցածից, յետ և ձախից առաջ ու հարվածում են հրացանի կոթի սուր անկյունով կամ խոտակով: Նայած մինչև հակառակորդը յեղած հեռավորությանը կատարվում են՝ առանց ընկոցի և ընկոցով: Ամենածանրը դիրքն և սեռական դժբարաններին (փոքրերի արանքին) հասցրած հարվածներն են:

§ 37. Հրացանի կոթով կողքից առանց ընկոցի հարվածում են՝

ա) Իբրեւ պատասխան՝ հակառակորդի հարվածը կամ խոցումը ձախ և ձախ-ցած վանելուց հետո.

բ) Յերբ հակառակորդներն այնքան են իրար մոտեցել, վոր սվինով գործելը դժվարացել է.

գ) Իբրեւ պատասխան՝ զենքը ձախ բռնելուն.

դ) Հակառակորդի զենքին ձախ հարվածելուց հետո (բառման):

Հրաման՝ «Կարճ կողքից-խփիր»:

Կատարումը.—Աջ ազդերը թափ տալով, միաժամանակ ուսերը դարձնելով, մարմինը դուրստեղից բարձրացնելով և առաջ տալով, հրացանի

կոթի սուր անկյունով ուժեղ հարված հասցնելով ձախ:

Միաժամանակ ուսերը դարձնելով աջ (ձախ) վոտքը քցել առաջ՝ աջ (ձախ):

Ձեռքերի գործողությունը.— Ձախ ձեռքով քաշում են հրացանը փողամասով ձախ ուսի կողմը, ծալված և արմունկի մոտ ուղիղ անկյուն կազմած աջ ձեռքով՝ հրացանի կոթը կտրուկ կերպով տալիս են առաջ-ձախ (պատ. 20):



Պատ. 20.

§ 38. Հրացանի կոթով կողքից ընկոցով հարված են կատարում՝ ձախ և ձախ-ցած, վանելուց հետո իբրեւ դրոհի շարունակություն, վանած խոցումից հետո:

Հրաման՝ «Կողքից-խփիր»:
Կատարումը.— Հարվածը կատարվում է մեկ

նվազում: Վոտքերն առանց ծախելու, արագ կերպով մարմնի ծանրությունը քցելով ձախ վոտքի վրա, միաժամանակ կարճ ուղղությամբ աջ վոտքը շարժելով առաջ: Յերբ աջ վոտքն անցնի ձախ վոտքի ներքանի դժից, աջ ազդրի ուժեղ ցնցումով և ուսերի կտրուկ շարժումով կատարել ընկոց և հրացանի կոթի սուր անկյունով հարվածել հակառակորդի գլխին (պատ. 21):



Պատ. 21.

§ 39. Հրացանի կտրով ցածից հարված են հասցնում նույնպիսի ղեպքում, ինչպես հրացանի կոթով առանց ընկոցի կողքից հարված հասցնելիս:

Հրաման՝ «Յածից-խփիր»:

Կատարումը.— Աջ ազդրի ցնցումով, աջ ձեռքի ուժգին շարժումով՝ ցած առաջ և վերև, հրացանի կոթի սուր անկյունով՝ ծախված ձեռքերով

հարված հասցնել հակառակորդի սեռական դրծարաններին կամ փորի ցածի ժառին (պատ. 22 և 23):



Պատ. 22.



Պատ. 23.

§ 40 Հրացանի կոթով ձախից ղեպի առաջ հարված են հասցնում՝ իբրև պատասխան հակառակորդի խոցումը ձախ կամ ձախ-ցած վանելու: Հետո—այն ղեպքում միայն, յերբ յերկու հակառակորդներն անընդհատ շարժվում են միմյանց դեմ ու դեմ:

Հրաման՝ «Առաջ-խփիր»:

Կատարումը.— Հակառակորդի խոցումը վանել, արագ կերպով աջ ձեռքով հրացանը շարժել

կոթով անաջ և հրացանի խղատակով հարվածել հակառակորդի գլխին (սլինը դանդում և ձախ ուսի մոտ: (Պատ. 24):

§ 41. Հրացանի կոթով յետ են հարվածում, յերբ հակառակորդը հանկարծակի հայտնվում և յետեվի կողմից մոտիկ տարածության վրա (խրամաակց, լրամուգուց, անկյունից, ծառի յետեվից):



Պատ. 24.



Պատ. 25.

Հրաման՝ «Յետ-խփիր»:

Կատարումը. — Միաժամանակ յերկու վտարերի վրա դառնալով աջից յետ, հրացանը պահեառառափով դարձնել վեր և աջ ձեռքի կտրուկ ցնցումով, ձախ ձեռքից հրացանը բաց թողնելով՝ հրացանի խղատակով հարվածել հակառակորդի

գլխին (ընկողով կամ առանց ընկողի, նայած մինչև հակառակորդը յեղած հեռավորությանը):

Դրությունը՝ հարվածելիս. — Աջ թեվը մի փոքր ծալված և, ձախ թեվի արմունկն ազատ կախ և քցված (պատ. 24 և 25):

Ծանոթություն. — Այս նույն հարվածը կառելի յե հաղցնել նաև այն դեպքում, յերբ հակառակորդը հայտնվում և աջից:

V. Մ Ա Ր Զ Ա Ն Ք

Ա. Մարտիկի անհատական մարզանքը խոցումներ, հարվածներ կատարելու և պաշտպանվելու համար

§ 42. Հատուկ դասերին մարզանք են կատարում՝ զանազան դրություններից և զանազան ուղղություններով խոցելու, հարվածելու, պաշտպանվելու և պատասխաններ տալու սովորություններ ձևաբերելու նպատակով: Դրանից յեղելով մարզանքն սկսվում և մեկ «հակառակորդի» (խրամակի) վրա հարվածներ տեղադրվում և այնուհետև այդ մարզանքն անառնաբար բարդանում և զանազան ուղղություններով և զանազան նպատակներ (խոցում, հարված) համար շարժվող խրամակներին քանակով: Հարվածելու հաջորդակա-

սությունը ցույց է տալիս հրամատար-հրահան-
դելը (հրամանի կամ կարգադրութեան միջոցով) :
Հարվածելու հաջորդականութիւնը վարքան կա-
րելի յե շուտ շուտ պետք է փոխել : Հարվածելու
մարդանքը պետք է կատարել ըստ հնարավորին
անգիւրը և պայմանները շուտ շուտ փոխելով՝ քայ-
լելով, վազելով, խրամատում, խրամատի վրայից
թռչելով, դերանի վրայից վազելով, սարն ի վեր
վազելով, աշտեղից իջնելով, անտառում և այլն :
Մարդանքի ժամանակ նրա նպատակները պետք է
ըստ հնարավորին ցույց տալ անսպասելի կերպով-
ծառի յետևից, անկյունից, վտրմանից, խրամա-
տում, մարտիկը խրամատի մէջ թռչելիս :

Որինակելի վարժութիւններ.

Որինակ 1-ին. — Խոցում-խոցում :

Պարագաւ. — Խոցելու համար սանդղածն դրը-
ված են յերկու խրովիւղի : Մարտիկը զտնվում է
առաջին խրովիւղից 20 քայլի վրա, վորեւ դը-
րութեամբ : (Տես պատ. 26, սխեմա № 1) :

Խնդիր. — Դեկավարի նշանով քայլելով (վա-
զելով) անցնել դրոհի և խոցել 2 խրովիւղակները :

Ծանոթութիւն. — Դեկավարը պարագան փո-
խում է. 2-րդ շարժական խրովիւղը հայտնվում
է ձախ կամ աջ կողմից (հանկարծակիութեան
դեպք) :

Որինակ 2-րդ. — Խոցում-վանում-խոցում :
Պարագաւ. — Խոցումների համար յերկու ան-
շարժ խրովիւղակներ : (Տես սխեմա № 2) : Մար-
տիկը № 1 խրովիւղակից 20 քայլ հեռավորու-
թեան վրա յե :

Խնդիր. — Անցնել դրոհի, խոցել աջ № 2
խրովիւղակը, շարժականելով շարժումը դեպի № 1
խրովիւղակը, վանել դեկավարի մարդափայտով
տրված հարվածը և խոցել № 1 խրովիւղակը :

Ծանոթութիւն. — Դեկավարը փոխում է պա-
րագան՝ ա) № 2 խրովիւղակը դարձնում է շարժա-
կան, առաջ շարժելով այդ խրովիւղակը մարտիկի
շարժվելու աջ կամ ձախ կողմից (հանկարծակիու-
թեան դեպք), բ) շարժական խրովիւղակը հայտն-
վում է մարտիկի՝ № 1 խրովիւղակը վորեւ կող-
մից վանելուց և խոցելուց հետո :

Որինակ 3-րդ. — Խոցում-վանում-հարված
(կարճ) :

Պարագաւ. — Յերկու անշարժ խրովիւղակներ
մէկը խոցելու, մյուսը հարվածելու համար : Մար-
տիկը զտնվում է խոցելու խրովիւղակից 20 քայլ
հեռավորութեան վրա : (Տես սխեմա № 3) : Ող-
նականը մարդափայտով աջ կողմից խոցում է կա-
տարում մարտիկի կրծքին :

Խնդիր. — Անցնել դրոհի խոցելով № 1 խրովիւղ-

վերակը, վանել խոցումը ձախ և կողքից կարճ պատասխան հարված հասցնել № 2 խրովիլակին :

Ծանոթութուն.— Յեթե ոգնականը գտնվում և խրովիլակի ձախ կողմում և խոցում և կատարում մարտիկի կրծքին, մարտիկը վանում և աջ և պատասխանում և խոցումով :

Որինակ 4-րդ.— Վանում—հարված—խոցում :

Պարագան.— Յերկու խրովիլակ. № 1-ը հարվածելու, № 2-ը շարժական՝ խոցելու համար : Ոգնականն 1-ին խրովիլակի աջ կողմից խոցում և կատարում մարտիկի կրծքին : (Տես սխեմա № 4) :

Խնդիր.— Անցնել գրոհի, վանել ոգնականի ուղղած խոցումը ձախ, միացնելով վանումը ձախից առաջ հարվածելուն, վորից հետո հարված հասցնել հայտնվող հակառակորդին (խրովիլակ № 2) :

Ծանոթ.— Հակառակորդը հայտնվում և (խրովիլակ № 2) վորեւ կողմից :

Որինակ 5-րդ.— Վանում—խոցում վանում—հարված :

Պարագա.— Խոցելու խրովիլակը : Հրահանդիշը մարդափայտով գտնվում և խրովիլակի մոտ, ոգնականը դեկավարի նշանով՝ մարդափայտով հարձակվում և ձախ կողմից մարտիկի վրա : (Տես սխեմա № 5) :

Խնդիր.— Անցնել գրոհի, վանել հրահանդիշի կողմից ուղղված խոցումը ցած աջ—պատասխան խոցում կատարել խրովիլակին, վորից հետո վանել ձախից ուղղված խոցումը, միացնելով դեպի ձախ կատարվող վանումը «կողքից յերկարով» պատասխան խոցումին, մարդափայտին :

Որինակ 6-րդ.— Խոցում—հարված յետ :

Պարագա.— Խրամատ, խրամուղի : Խրամատում խոցելու խրովիլակ : Ոգնականը մարդափայտով անկյան յետեվը : Մարտիկը խրամատից 20 քայլ հեռավորության վրա յե :

Խնդիր.— Գրավել խրամատը, խոցել խրամուղի և հարվածել յետ՝ հայտնվող հակառակորդին (մարդափայտ) : Դուրս թողել խրամատից :

Ծանոթութուն.— Վարժությունը կարելի յե կրկնել. 1) անտառում՝ ծառի յետեից, 2) շենքերի արանքից, անկյունից :

Որինակ 7-րդ.— Խոցում—խոցում յետ դարձումով :

Պարագա.— Խոցելու խրովիլակ : Ոգնականը մարդափայտով հայտնվում և յետեից, խոցում և թիկունքից և մարտիկի կողմից կատարվող վանումից հետո խոցելու համար մարտիկին գունդ և

գեմ անում: Մարտիկը խրավիլակից 10 մետր հե-
ռավորության վրա յե:

Խնդիր. — Գրոհի անցնել և խոցել խրավիլա-
կը: Յեա դառնալ, հրացանի կոթով մարդափայտը
վանել և հայտնվող հակառակորդին խոցել (մար-
դափայտ):

Որինակ 8-րդ. — Գրոհի չարունակումը հա-
կառակորդի կողմից վանում տեղի ունենալուց
հետո:

Պարագա. — Խոցելու խրավիլակ: Ողնակոնը
մարդափայտով խոցումը մարտիկից խփում է ձախ
(աջ): Մարտիկը խրավիլակից 20 մետր հեռավոր-
ության վրա յե:

Խնդիր. — Անցնել գրոհի և խրավիլակը խո-
ցել: Յեթե խոցումը վանված է ձախից գրոհը
չարունակում են հարվածելով. խոցումն աջ վա-
նել անպայման խոցելով:


Ծանոթություն. — Ամեն դեպքում պահանջել
մարտիկներից՝ գրոհը հասցնել մինչև վերջ:

Բ. Մարտիկի մարզանքը սրամարտական
հրացանով

§ 43. Մարտիկի՝ սրամարտական հրացանով
մենամարտի համար մարդանք կատարելու նպա-
տակն է՝ զիմադրող հակառակորդին դանդաղ

կերպ խոցելու և իրեն կշռադատելու սովորութ-
յանը ձեռք բերելու համար:

Ծանոթություն. — Դժբախտ դեպքերից պերժ-
լինելու համար չի թույլատրվում հրացանի կոթով
հարվածներ հասցնել:



Պատ. 26.

Պարագմունքները կատարվում են դասակների
հրամատարները վաշտերի հրամատարներին

Հակոբությամ : Պարագմունքներին հասկացվում
է 2 ժամ, վորն ընթացքում յարաքանչյուր մար-
տիկ 2 մարտից պակաս չդետք է ունենա՝ 212.—3
բուլեյի տեւողությամբ : Պարագմունքները սեղը
բակում, ճամբարում— 12 մ. յերկարության և 7
մ. լայնության ուղղանկյունանի տարածության
վրա :

Սրամարտական հրացաններով զինված, զի-
մակներ, ձեռնոցներ, կրծքակաշններ հազած մար-
տիկները կանգնում են հարթակի կարճ (7 մետր)
գծերի վրա և դասակի հրամատարին՝ «սկսիր» հը-
րամանով սկսում են մարտը :

Հարթակի անկյուններում կանգնում են զի-
տողները, վորոնց խնդիր է տրված մարտը դա-
դարեցնել՝ հենց վոր մարտիկներից մեկը խոցում
է ստանում :

Մարտը դադարեցնելու համար զիտողը տալիս
է՝ «կանգ առ» հրամանը և դասակի հրամատարին
զեկուցում է դադարեցնելու պատճառը : Մարտը
չարունակվում է դասակի հրամատարի կարգող-
ությամբ :

Մենամարտով մրցում են միմիայն յերկու
մարտիկներ : Վերոհիշյալ պարագմունքներին չի
թույլատրվում խմբի կամ ստորարաժեւոման ա-
ռաջության մրցություններ սարքել :

գ. Մարտիկի և ջոկի մարզվելը՝ բնական
և արհեստական խոչընդոտների շերտում
գտնվող նշաններին խփելու գործում :
(գրահ)

§ 44. Շերտը.— Յեղարությունը 100 մ.,
լայնությունը՝ 20—25 մ. : Շերտում կա՝ ա) մա-
ցառուտ կամ ցանկապատ, բ) խոցելու խրովիլակ,
գ) պատուհանին (կամ ալ ճշանի) նոնակ նետելու
զիծ, դ) նոնակ նետելու պատուհան (կամ ալ նը-
շան), զ) հորիզոնական գերան (առվի կամ խըր-
շան), ի) խոցելու խրովիլակ, լ) վանդանի վրայից, է) խոցելու խրովիլակ, զ)
հարվածելու խրովիլակ (զիմաբությամբ), այ-
սինքն գեպի մարտիկն ուղղված խոցումը նախա-
պեսվանելով, թ) նոնակը խրամատը նետելու զիծ,
ժ) խրամատ, վորի մեջ կա դեպի ձախ խոցելու
խրովիլակ և հրացանի կոթով յետ հարվածելու
խրովիլակ, ի) խոցելու խրովիլակ, լ) հրաձգու-
թյան համար պատրաստվելու զիծ-ֆինիշ (պատ.
27) :

Խնդիր.— Մարտիկին կամ ջոկին՝ գրոհի անց-
նել, հաղթահարելով խոչընդոտները, հարվածել
ճանապարհին հանդիպած նշաններին և հասնելով
ֆինիշին, պատրաստվել հրաձգության :

Կատարումը.— Ղեկավարի հրամանով մար-
տառ. 27.


տիկը կամ ջուկը վազելով դրոհի յե անցնում և հաղթահարում և խոչընդոտները. ա) խոցում և խրավիլակը. բ) նոնակ և նետում. գ) գերանի վրա լայով անցնում և. դ) խրավիլակին խոցում և. զ) վանում և ողնականի խոցումը և պատասխան հարված և տալիս խրավիլակին: Պատկած զրու-թյունից խրամատի մեջ նոնակ և նետում: Վազում ու թռչում և խրամատի մեջ. խոցում և խրավիլակը և հարվածում և յետ (մարդպիսյուն): զուրս և թռչում խրամատից, վազում խոցում և վերջին խրավիլակը և հասնելով Ֆինիլին, պատրաստվում և պոկում հրաձգության:

Ծանոթութուն.— Ջուկի մարզանքի ժամանակ յուրաքանչյուր մարտիկ պետք և ունենա իր խոչընդոտների շերտը:


Գ. Մարզանք՝ մարտավարական պատրաստության պրոցեսում

§ 45. Մարտավարական պատրաստության պրոցեսում մարզանք կատարելու նպատակն և սովորեցնել կրտսեր հրամաադրին կամ մարտիկին արագ և ինքնուրույն կերպով լուծելու՝ ավինով կամ հրացանի կոթով ձեռնամարտին մոտիկ պա-րազայում յեղած նշանները հարվածելու խնդիր-ները: Նշանները հարվածելու համար առանձին


հրամաններ չեն տրվում: Ստորաբաժանումները հանդիպելով թերախներով (խրավիլակներով) նը-շանակված հակառակորդին, «մարտական» (վար-ժական) խնդիրը կատարելու պրոցեսում հարվա-ծում են նրան՝ նոնակներով, խոցելով և հարվա-ծելով: Առանձին և հատուկ խնդիրներ չեն արը-



Սմատ. 28.



Պատ. 29.



Պատ. 30.


վում: Մարզանքը միաժամանակ սկսվում և ջուկի մարտավարական պատրաստությունն սկսվում: Թիրախներով նշանակվում և հակառակորդի

վոչ սրակառ քան մեկ ջուկ, վոչ ավելի, քան մեկ դասակ:

Նշանները գտաափորվում են աշնայեա, վոր-
պեպի մարտիկների առջեվում նրանց յերեվալն
բառ հնարավորին լինի անապատելի. այդ նշան-
ները գրվում են թմբերի հակառակ յերեսին, խը-
րամատներում, մացառուտի մեջ, դուրս դալիս մա-
ցառուտից, անկյունից, կողքից յեռեից կամ թե
գտաակի հրամատարի ազդանշանով դուրս դալ
առաջը:

VI. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՊՈՆՈՎՈՒՄԸ (ՄԻՆԻՄԱԼ)

§ 46. 1) Հրացանին տիրապետելու նախնների
առումնասիրության և նրանցում անհատապէս
վարժվելու համար սովորողների խմբին անհրա-
ժեշտ է՝ խրտփիլակ № 1—մեկ (սլատ. 28), № 2—




Պատ. 31.

մեկ (սլատ. 29) և № 3—մեկ (սլատ. 30):

Հրացաններ (վարժական) յերկու մարտիկնե-
րին՝ մեկից վոչ սլակառ:

2) Զուկի մարդկելը՝ խոչընդոտների շերտում
յեղած նշանները հարվածելու համար—ջուկի հա-
մար՝ խոցելու և հարվածելու խրտփիլակներ,
մարդափայտեր (սլատ. 31 և 32), նոնակներ և
վարժական հրացաններ մարտիկների թմբի համե-
մատ, իսկ № 1 խրտփիլակը յեռակի և նոնակները
կրկնակի չափով:

Ծանոթութուն.— № 2 մարդափայտը (սլատ.
32) դորժ և ամփամ խոցումները դուրս խփելու
համար:



Պատ. 32.

3) Մենամարտության մարդանդ-դասակի հա-
մար՝ սրամարտական հրացան—4, գլխակ—4,
կրժքակալ—4, ձեռնոց—4 և քաշեռտի սը-
վին—6:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
I. Ներածություն	4
II. Պատրաստության կազմակերպումն ու կատարումը	6
III. Ծրագիր և ուսուցման ժամանակի որինա- կելի հաշիվ	8
IV. Սվինամայտի հիմնական նվագները	13
Ա. «Մարտի» դրությունը և այլ դրու- թյամբ չարժեքը	13
Բ. Սոցումներ	16
Գ. Վանումներ	25
Դ. Հարվածներ հրացանի կոթով	30
V. Մարզանք	36
Ա. Մարտիկի անհատական մարզանքը խոցումներ, հարվածներ հասցնելու և պաշտպանվելու մեջ	36
Բ. Մարտիկի մարզանքը սրամարտական հրացանով	41
Գ. Մարտիկի և ջոկի պարզվելը՝ բնական և արհեստական խոչընդոտների շերտում դանակի և զաններին խփելու դործում (դրոհ)	44
Դ. Մարզանք՝ մարտավարական պատ- րաստության պրոցեսում	45
VI. Պատրաստության նյութական ապահո- վումը (մինիմալ)	47

ՀՀ Ազգային գրադարան



NL0212629

375.

42.141